Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Բաղադրիչ Ա՝ Որակի կառավարում

Գործունեություն Ա.2

Լուծումների ընտրություն

Ծրագրի մասնակից՝

Յոլանտա Մինկեվիչա, Լատվիայի կենտրոնական վիճակագրական բյուրո

Հայաստան, 2011 թ. Հունիսի 6 – 10

Տարբերակ՝ 2րդ նախագիծ

Հայաստանի Հանրապետության
Ազգային վիճակագրական
ծառայություն

Լատվիայի կենտրոնական
վիճակագրական բյուրո

Հեղինակի կոնտակտային տվյալներ

Յոլանտա Մինկեվիչա
Լատվիայի կենտրոնական վիճակագրական բյուրո
1, Lāčplēša street
Ռիգա, LV-1301
Լատվիա
Tel. +371 67366629
Jolanta.Minkevica@csb.gov.lv

Բովանդակություն

Հապավումների և ցանկ 3
1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Քայլեր և արդյունքներ 4
   Ա. Քայլեր 4
   Բ.Արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկներ 7
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր 10

Հաշվետվության հավելվածներ
Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք 11
Հավելված 2 Առաքելության ծրագիրը 12
Հավելված 3 Հանդիպումներ անձանց հետ 13
Հավելված 4 Ազգային վիճակագրական ծառայության արտադրանքի ցուցակի օրինակ (ԼԿՎԲ) 14
Հավելված 5 Որակի հաշվետվության օրինակ(ՄԲՎԾ) 18
Հավելված 6 Որակի հաշվետվության օրինակ (ԴՎԾ) 24

Առաքելության ընթացքում կազմված այլ հավելվածներ
Հավելված A2.7 Որակի կառավարման վերաբերյալ Power Point ներկայացումներ

Հապավումների ցանկ

Ա.1 Թվինինգ գործունեություն Ա.1 “Վիճակագրության որակի բարելավման համար խնդիրների հայտնաբերում”
Ա.2 Թվինինգ Գործունեություն Ա.2 “Լուծումների ընտրություն”
Ա.3 Թվինինգ Գործունեություն Ա.3 “Լուծումների իրականացում”
Բ.2 Թվինինգ գործունեություն Բ.2 “Ներդրման պլան”
ՇԵ Շահառու երկիր
ԼԿՎԲ Լատվիայի կենտրոնական վիճակագրական բյուրո
Բաղադրիչ Ա Բաղադրիչ Ա “Որակի կառավարում”
Բաղադրիչ Բ Բաղադրիչ Բ “Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն”
ԴՎԾ Դանիայի վիճակագրական ծառայություն
ԵՎՀ Եվրոպական վիճակագրական համակարգ
ԵՄ Եվրամիություն
ՏՏ Տեղեկատվական տեխնոլոգիաներ
Առաքելություն Անդամ Պետության փորձագետի(ների) այցելությունը շահառու երկիր Թվինինգ գործունեությանը մասնակցելու համար;
ԱՊ Անդամ Պետություն
NACE Տնտեսական գործունեությունների վիճակագրական դասակարգում
ԱՎՀ Ազգային վիճակագրական հաստատություն
ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ԱՎԳ Ազգային վիճակագրական գրասենյակ (Մեծ Բրիտանիա)
ՀՀ Հայաստանի Հանրապետություն
ԹՄԽ Թվինինգ ծրագրի մշտական խորհդատու
ԿԲՎ Կառուցվածքային բիզնես վիճակագրություն
ՀՀՊԵԿ ՀՀ Պետական Եկամուտների կոմիտե
Թվինինգ Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով
ՈԱԽ ՀՀ ԱՎԾ Որակի աշխատանքային խումբ

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն զեկույցը նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայություն այցելության արդյունքում: Այն Բաղադրիչ Ա շրջանակում երկրորդ այցելությունն էր և նվիրված էր որակի հաշվետվություններին և որակի մեթատվյալների համակարգերին: Այն ներառում էր նաև վիճակագրության արտադրանքի համար դասակարգումների և վարչական տվյալների քննարկումները, ինչպես նաև իրականացվեց Ա1 առաքելության զեկույցի ընթացքի հետևում:

Անդամ պետության փորձագետը շնորհակալություն է հայտնում բոլոր պաշտոնյաներին և անհատներին օժանդակության և տրամադրված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը ստացվել է Հայաստանում գտնվելու ընթացքում, և նպաստել աշխատանքի ընթացքի դյուրինացմանը:

Զեկույցի մեջ ներկայացված հայացքները և դիտարկումները պատկանում են նշված փորձագետին և դրանց համապատասխանությունը Լատվիայի վիճակագրական ծառայությանը պարտադիր չէ:

2. Քայլեր և արդյունքներ

2.1. Քայլեր

Առաքելության ընթացքում փորձագետը ներգրավված է եղել մի շարք գործունեությունների մեջ՝

- Հանդիպում ԹՄԽ և ՇԵ Բաղադրիչի ղեկավարի հետ՝ նախորդ այցելությունից հետո իրականացվող գործողությունների և շաբաթվա աշխատանքային ծրագրի քննարկում
- ՀՀ ԱՎԾ-ի բաժնի պետերի համար հետևյալ ներկայացումներ՝
  - Բաղադրիչ Ա բովանդակությունը և ակնկալվող արդյունքը
  - „վիճակագրական որակ" տերմինի ներկայացում
  - ԼԿՎԲ որակի մեթատվյալների համակարգ,
  - հետագա քայլեր
- ՀՀ ԱՎԾ-ի Բիզնես վիճակագրության բաժնի, Ֆինանսների վիճակագրության բաժնի և Մեթոդաբանության բաժնի աշխատակիցների համար Կառուցվածքային բիզնես վիճակագրության ներկայացում
- ՀՀ ԱՎԾ-ի SS աշխատակիցների համար ԼԿՎԲ որակի մեթատվյալների համակարգի ադմինիստրավորման ներկայացում
- ՀՀ ԱՎԾ-ի մեթոդաբանության բաժնի հետ հետագա քայլերի քննարկում
- Բաղադրիչ Ա-ի համար նախագիծ ժամանակացույցի/ աշխատանքային ծրագրի նախապատրաստում
- Հանդիպում ՀՀ Պետ. Եկամուտների կոմիտեյի հետ
- Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի՝ ամփոփում, արդյունքների և առաջարկների ներկայացում: Հետագա քայլերի համաձայնեցում

2.2. Արդյունքներ

Առաքելության ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

Ընդհանուր արդյունքներ

- ՀՀ ԱՎԾ-ում որակի խնդիրների համակարգող նշանակվեց Մեթոդաբանության և դասակարգման բաժնի պետ՝ Լիլիթ Պետրոսյանը
- Ընդունվեց որոշում ստեղծուլու ՀՀ ԱՎԾ-ի որակի աշխատանքային խումբ *(ՈԱԽ)*, որը կներառի հետևյալ բաժինների մասնակիցներին՝
  - Մեթոդաբանության բաժին
  - Միջազգային վիճակագրության համագործակցության բաժին
  - Մաթեմաթիկոս (ընտրանքի մասնագետ)
  - Բիզնես վիճակագրություն (արդյունաբերություն և գյուղատնտեսություն)
  - Սոցիալական վիճակագրություն(աշխատուժ)
  - Գների վիճակագրություն
  - Տարածման բաժին

  ՈԱԽ-ը հիմնականում կհանդիսանա Բաղադրիչ Ա-ի շրջանակում քննարկումների և նպատակների նվաճումների համար գործիք ՀՀ ԱՎԾ-ի ներսում գործողությունների (առաքելությունների) միջև:
- Համաձայնություն ձեռք բերվեց կապված տեղեկատվության հոսքի հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդյունավետ հաղորդակցման համար աշխատակիցները պետք է հասկանան և պատկերացնեն իրենց պարտականությունները և, այդպիսով, ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցները պետք է տեղեկացված լինեն որակի գործունեությունների մասին Թվինինգ նախագծի շրջանակում:

  ՀՀ ԱՎԾ-ի բաժնի պետերը կտեղեկացվեն ներկայիս և ապագա ՀՀ ԱՎԾ-ի որակի գործունեությունների մասին՝

  =>ԱՊ փորձագետների կողմից - առաքելությունների ընթացքում կայանալիք հանդիպումների ժամանակ (ԱՊ փորձագետները Բաղադրիչ Ա շրջանակում իրականացվող ցանկացած առաքելության ընթացքում հանդիպումներ կունենան ՀՀ ԱՎԾ-ի բաժնի պետերի հետ իրենց տեղեկացնելու համար պլանավորված որակի առաքելությունների մասին տվյալ առաքելության ընթացքում);

  => Լիլիթ Պետրոսյանի կողմից – ՈԱԽ-ի կողմից իրականացվող աշխատանքների մասին ամսական հանդիպումների ժամանակ

  Ավելին, ՀՀ ԱՎԾ-ի բաժնի պետերը պետք է ստացված տեղեկատվությունը տրամադրեն նաև իրենց ենթակայության տակ աշխատող աշխատակիցներին:

2.2.1. Որակի հաշվետվություն

- ՀՀ ԱՎԾ-ի միջին օղակի ղեկավարների համար իրականացվեց ԼԿՎԲ-ի որակի մեթատվայլների համակարգի ներկայացում;
- ՀՀ ԱՎԾ-ի Մեթոդաբանության բաժնի հետ քննարկվեցին հետագա քայլերը, ներածություն կատարվեց ԴՎԾ, ԼԿՎԲ-ի, ինչպես նաև Ավստրալիայի վիճակագրության բյուրոյի որակի հաշվետվությունների ձևերին: Քննարկվեց

ԵՎՀ ստանդարտը որակի հաշվետվությունների համար և որակի հաշվետվությունների ձեռնարկը:

2.2.2. Դասակարգումներ

Իրականացվեց խնդիրների պարզաբանում: Հայաստանում պետական մարմինները չեն օգտագործում միևնույն/միասնական դասակարգումը:Ներկայումս շատ դասակարգումներ օրինակ NACE չեն օգտագործվում պետական մարմինների կողմից իրենց առօրյա աշխատանքի ժամանակ: ՀՀ ԱՎԾ նպատակ ունի հիմնելու դասակարգման ցուցակ, որը պետք է օգտագործվի վարչական տվյալների արտադրության ընթացքում, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության մեջ: Այդպիսով, նպատակն է ներկայացնել միասնական/ներդաշնակեցված դասակարգում, որը կօգտագործվի բոլոր կառավարական հաստատությունների կողմից:

ՀՀ ԱՎԾ կազմակերպում է միջկառուցվածքային հանդիպումներ (օրինակ՝ Գյուղատնտեսության նախարարության հետ) և բացատրում միասնական դասակարգման օգտագործման առավելությունները: Առաջին պաշտոնական քայլը արդեն իրականացվել է ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ներկայացնելով կառավարության որոշման նախագիծ NACE rev.2 ազգային տարբերակը պարտադիր Պետական Եկամուտների կոմիտեյի կողմից պարտադիր օգտագործման վերաբերյալ: Այս որոշման հաստատվելուց հետո հաջորդ քայլը կլինի նմանատիպ որոշումների հաստատումը բոլոր պետական հաստատություններում NACE-ի ներդրման համար:

ՇԵ հաստատեց, որ Թվինինգ նախագծի շրջանակում նախատեսված չեն հատուկ գործողություններ այդ խնդրի առնչությամբ: Այլ կառավարական հաստատությունների հետ հանդիպումների ժամանակ ԱՊ փորձագետները պետք է շեշտը դնեն պետական կառավարման օղակում ներդաշնակեցված դասակարգման օգտագործման վրա:

2.2.3. Մեթատվյալներ

- Առաքելության ընթացքում ԱՊ փորձագետը շեշտը դրեց որակի մեթատվյալների վրա: ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար իրականացվեց ներկայացում ԼԿՎԲ որակի մեթատվյալների համակարգը, որին հետևեցին գործնական պայմանավորվածությունների մասին քննարկումներ (ստանդարտացված միավորների/ցուցակների ստեղծում (օրինակ՝ օգտագործվող դասակարգումներ), օգտագործողի իրավունքներ,արտահանման և որոնման գործառույթներ, տեղեկատվության կարգավիճակ (միավորը երբեք չի ջնջվել, սակայն կարգավիճակը փոխվել է՝ գործող է, թե ոչ և այլն)).
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դանիայի վիճ. ծառայության վիճակագրական մեթատվյալների փորձագետը չկարողացավ մասնակցել առաքելությանը, նախնական պայմանավորվածության համաձայն այդ թեմայի քննարկումը տեղափոխվեց հաջորդ այցելություն Ա.3: Այումենայնիվ, ՀՀ ԱՎԾ-ի պետական խորհրդի անդամը՝ Պրն. Վանուշ Դավթյանը, որը պատասխանատու է տեղեկատվական տեխնոլոգիաների համար, բացատրեց նոր ժամանակակից ծրագրային ապահովման ներդրման անհրաժեշտությունը Windows և Internet-ի

միջավայրում մատչելի կերպով վիճակագրության տեղեկատվության տարածման հնարավորության համար: Հնարավոր լուծում է հանդիսանում PC-AXIS ընտանիքի արտադրանքը:

2.2.4. Բ.2 բաղադրիչի հետ համատեղ գործողություններ

- ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների համար իրականացվեց ներկայացում կառուցվածքային բիզնես վիճակագրության վերաբերյալ ԱՊ փորձագետի կողմից: Ներկայացումը ներառում էր ընդհանուր բնութագիրը և ԿԲՎ առնչվող ԵՄ պահանջները, ինչպես նաև ԵՄ երկրներում և մասնավորապես Լատվիայում ԿԲՎ գործնական իրականացմանը:
- Հանդիպում Հայաստանի Հանրապետության Պետական Եկամուտների Կոմիտեյում: Այս բարձրաստիճան հանդիպման նպատակն էր նպաստելու ՀՀ ԱՎԾ-ի և ՊԵԿ հետագա համագործակցությանը, մասնավորապես լավ որակի վարչական ռեգիստրի ստեղծման հարցում և վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման համատեքստում: ՊԵԿ-ը իրենց բաժիններին տրամադրել էր հանդիպման օրակարգը և այդպիսով միջին օղակի ղեկավարները, որոնք ևս հետաքրքրված էին այդ հարցում, հնարավորություն ունեցան մասնակցել այդ հանդիպմանը: Հանդիպման ընթացքում հակիրճ ներկայացվեց Թվինինգ նախագիծը և շեշտը դրվեց այն հանգամանքի վրա, որ վիճակագրական ծառայությունը ԵՄ և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի համաձայն պետք է օգտագործի վարչական տվյալները ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով: Ի լրումն, ներկայացվեց Դանիայի փորձը վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման վերաբերյալ:

2.2.5. Ժամանակացույց

Բաղադրիչ Ա համար նախապատրաստվեց նախագիծ ժամանակացույց և համաձայնեցվեց ՀՀ ԱՎԾ-ի բարձրաստիճան ղեկավարության հետ:

- Հաջորդ առաքելությունից առաջ քայլեր (Ա.3) –տես սույն զեկույցի 4-րդ բաժնում
- Ա.3 ընթացքում կիրականացվեն հետևյալ գործողությունները՝
  - ԱՊ փորձագետների ներկայացում մեթատվյալների և տարածման համակարգերի վերաբերյալ
  - ՇԵ որոշումը վիճակագրության տարածման համար ընտրված համակարգի մասին (օրինակ՝ PC-Axis);
  - 5 որակի հաշվետվությունների վերանայում, անհրաժեշտության դեպքում օրինակելի ձևի ճշգրտում
  - Վիճակագրական արտադրանքի ցուցակի վերանայում
  - Ա1 և Ա2 առաքելությունների զեկույցներում ներկայացված առաջարկների կատարմանը համապատասխանեցում
- Որից հետո՝
  - Վիճակագրության տարածման համար ընտրված համակարգի ձեռքբերում

- ՀՀ ԱՎԾ-ում համակարգի ներկայացումը և ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների վերապատրաստումը այդ համակարգը օգտագործելու համար
- Որակի հաշվետվությունների լրացման համար միջավայրի քննարկում
- Բոլոր վիճակագրական արտադրանքների համար կազմել աշխատանքային պլան որակի հաշվետվությունների ներդրման համար (համաձայն արտադրանքի ցուցակին);
- Վեբ կայքում որակի հաշվետվությունների տեղադրում

Հաջորդ Թվինինգ գործունեությունները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՇԵ փորձագետները կարող են լինել զբաղված/ոչ հասանելի սկսած 2011 սեպտեմբերից - 2011 թ հոկտեմբեր ամսին պլանավորված մարդահամարի պատճառով:

3.Եզրակացություններ և առաջարկներ

Բարձրաստիճան ղեկավարության աջակցությունը կարևոր նախապայման է կազմակերպության շրջանակում արդյունավետ որակի նախաձեռնությունների համար: Ղեկավարությունը պետք է տրամադրի կազմակերպությունում վիճակագրության որակի տեսլականը և ոգեշնչի աշխատակիցներին հասնելու այս տեսլականին: Ղեկավարությունը պետք է նվիրված լինի որակին, խրախուսի նախաձեռնությունները և հետևողական լինի կազմակերպման մեջ: Առաքելության ընթացքում ԱՊ փորձագետը հավաստիացավ, որ ՇԵ Բաղադրիչի ղեկավար՝ Պրն Ստեփան Մնացականյանը լիարժեքորեն նվիրված է Թվինինգ նախագծի նպատակներին հասնելուն: ՀՀ ԱՎԾ-ի նախագահը սկսեց հանդիպումը որակի հաշվետվության մասին և իր խոսքում շեշտը դրեց փաստաթղթավորման և ստանդարտացման կարևորության վրա: Նա հայտնեց իր աջակցությունը դրա մասին տեղեկացնել և հանձնարարել ողջ ծառայությանը:

Առաքելության ընթացքում ԱՊ փորձագետը նկատեց, որ ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցները շատ հետևողական և հմուտ էին և ցանկություն էին հայտնում բարելավելու իրենց աշխատանքը: Նկատվեց, որ ծառայության վարչական ընթացակարգերը օրինակ՝ հրամանի նախապատրաստման և հաստատման ընթացքը կարող է պահանջել երկարատև ժամանակ, նույնիսկ մինչև 3 շաբաթ: Այուամենայնիվ, ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցները ճկուն են և նպատակասլաց և իրենք պատրաստ են սկսել աշխատանքը այդ ուղղությամբ նախքան վարչական ընթացակարգի սահմանումը:

ԱՊ փորձագետը տեղեկացվեց, որ՝

- ՇԵ հաստատությունները դժվարանում են հասկանալ, թե ինչու է հարկավոր հետևել Եվրոպական գաղափարներին, այն դեպքում եթե Հայաստանը ԵՄ անդամ չի հանդիսանում: Այս դեպքերում ՀՀ ԱՎԾ բացատրում է, որ ԵՄ և ՀՀ միջև ստորագրվել է հուշագիր, որտեղ ասված է, որ ՀՀ ԱՎԾ պետք է հետևի ԵՄ չափանիշներին:
- ՇԵ պետական հաստատությունները չունեն միանշանակ պատկերացում վարչական ռեգիստրի մասին: Շատ դեպքերում ռեգիստրը ընկալվում է որպես համայնքային մակարդակում և ոչ որպես անհատական տեղեկատվություն: Այլ հաստատությունների կողմից ՀՀ ԱՎԾ ուղարկվող տեղեկատվությունը և հակառակը ներառված է տարեկան/աշխատանքային ծրագրի մեջ: Մինչդեռ ՀՀ ՊԵԿ տեղեկատվությունը ներառված չէ ծրագրի մեջ: ՀՀ ԱՎԾ ստուգում է դրանք պարունակող ողջ վարչական տվյալները, հնարավորության դեպքում համեմատելով նմանատիպ վիճակագրական ցուցանիշների հետ:
- Վիճակագրական տվյալների օգտագործողները հաճախ չեն տարբերակում պաշտոնական վիճակագրությունը, վարչական տեղեկատվությունը և հարցումների արդյունքները: Հասարակությունում առկա է մոլորությունը, որ ՀՀ ԱՎԾ-ում կան տվյալներ ցանկացած ֆենոմենի վերաբերյալ, ինչպիսիք են

դատական համակարգի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, նախարարությունների վարկանիշը և այլն:.

- Օգտագործողները միտված են չվստահելու ընտրանքի մեթոդով ստացված տեղեկատվությանը և ցանկություն ունեն, որ ՀՀ ԱՎԾ հավաքագրի և հրատարակի անհատական տեղեկատվություն:

Այսպիսով, Ա.2 գործունեության ընթացքում ԱՊ փորձագետը ժամանակ հատկացրեց յուրաքանչյուր տերմինը բացատրելու համար և բերեց օրինակներ: Խորհուրդ է տրվում, որ հետագա առաքելություններին մասնակցող ԱՊ փորձագետները հաշվի առնեն այս հանգամանքը և տրամադրեն ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին պարզ և համապարփակ տեղեկատվություն, ինչպես նաև օրինակներ:

ՇԵ փորձագետների ԵՄ տերմինների, օրինակ՝"որակի հաշվետվություն", „վիճակագրական արտադրանք" և դրանց սահմանումների և բովանդակության վերաբերյալ գիտելիքները բարձրացնելու նպատակով, Ա2 առաքելության ընթացքում ԱՊ փորձագետը ժամանակ տրամադրեց յուրաքանչյուր տերմինը բացատրելու և օրինակներ բերելու համար: Խորհուրդ է տրվում, որ հետագա առաքելություններին մասնակցող ԱՊ փորձագետները ուշադրություն դարձնեն ՇԵ փորձագետներին տերմինների հետագա ծանոթացմանը և ՀՀ ԱՎԾ_ի աշխատակիցներին տրամադրեն պարզ և համապարփակ տեղեկատվություն և օրինակներ: Ա.1 հաշվետվությանը համաձայն մինչ հաջորդ գործունեությունը ՀՀ ԱՎԾ-ին խնդրել էին նախապատրաստել հետևյալ նյութերը՝

1. Որակի հաշվետվության օրինակելի ձև, որը հիմնված կլինի ԵՄ ԱՊ օրինակների վրա
2. Վիճակագրական դոմեյների ցուցակ, որոնք հարմար կլինի նկարագրել որակի հաշվետվությունների մեջ՝ ցուցակը պետք է պարունակի ողջ վիճակագրական գործունեությունները և խմբավորի դրանք 100-250 դոմեյներում.
3. Իրականում օգտագործվող և պոտենցիալ օգտակար վարչական աղբյուրների և իրենց հարաբերությունը վիճակագրության ճյուղերի նկատմամբ

Քանի որ ՇԵ փորձագետները վստահ չէին, արդյոք իրենք պետք է կիրառեն արտադրանքի մոտեցումը, թե գործընթացի մոտեցումը, որակի հաշվետվության օրինակելի ձևը չէր նախապատրաստվել: Խնդիրը պարզաբանելու համար բերվեցին երեք տարբեր երկրների որակի հաշվետվությունների օրինակներ և խորհուրդ տրվեց հետևելու ԵՎՀ-ի որակի հաշվետվությունների ստանդարտին[1].

Կոնցեպտուալ ոչ ճիշտ ընկալման պատճառով ՀՀ ԱՎԾ-ի կողմից նախապատրաստվել էր բոլոր վիճակագրական հետազոտությունների բոլոր փոփոխականների ցուցակը հայերեն լեզվով առաջարկվող վիճակագրական

[1] http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/quality/quality_reporting

դոմեյների ցուցակի փոխարեն: ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական արտադրանքի ցուցակը կնախապատրաստվի մինչև հաջորդ այցելությունը:

Վարչական աղբյուրների օգտագործման մասին տեղեկատվությունը նախապատրաստվել էր հայերեն բոլոր ՀՀ ԱՎԾ-ի բաժինների կողմից համաձայն մանրամասն օրինակելի ձևի, որը տրամադրվել էր Ա.1 հաշվետվության զեկույցի մեջ: Ընդհանուր առմամբ բոլոր վարչական աղբյուրներից ՀՀ ԱՎԾ-ում օգտագործվում է 1264 փոփոխական: ԱՊ փորձագետը խորհուրդ տվեց, որ տեղեկատվությունը օգտագործվի նաև Բաղադրիչ Բ շրջանակում ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության խնդիրների քննարկումների ընթացքում:

Առաջարկներ՝

- ՈԱԽ ստեղծման հրամանում ՀՀ ԱՎԾ պետք է նշանակի համապատասխան ղեկավար և ՈԱԽ անդամներ և պետք է նշվեն որոշակի առաջադրանքներ վերջնաժամկետներով (տես սույն զեկույցի կետ 2.2 և բաժին 4).
- Վիճակագրական արտադրանքի ցուցակը կազմելիս ՀՀ ԱՎԾ պետք է որոշում կայացնի այլ հաստատությունների կողմից կազմվող և հրատարակվող տվյալների վերաբերյալ: Հարկավոր է սահմանել չափանիշ դասակարգման համար, արդյոք այդ տվյալները ներառված են ցուցակի մեջ, թե ոչ: Սովորաբար, երբ այլ հաստատությունների տեղեկատվությունը վերահրատարակվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից դրանք չեն ներառվում ԱՎԾ-ի արտադրանքի ցուցակի մեջ:Այն դեպքում, երբ տվյալները փոփոխության են ենթարկվում և ճշգրտվում են համաձայն վիճակագրական սահմանումներին ստեղծվում է նոր արտադրանք, որը ներառվում է ցուցակի մեջ:
- Որակի հաշվետվությունների համար[2] օրինակելի ձև մշակելիս՝ ՀՀ ԱՎԾ պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ որակի հաշվետվությունները տարբերվում են: Ամենամանրամասն հաշվետվությունները նախապատրաստվում են ԱՎԾ-ի ներքին օգտագործման համար: Նաև օգտագործողի համար մատչելի հաշվետվությունները կարող են տարբերակվել համաձայն համապատասխան օգտագործողի խմբի վիճակագրական գրագիտության: Որպես կայքում տեղադրվող որակի հաշվետվության առաջին քայլ հակիրճ. (2-3 էջ), օգտագործողի համար մատչելի(պարզ լեզու, վիճակագրական տերմինների

[2] Որակի հաշվետվությունների օրինակներ՝

a) http://www.ons.gov.uk/about-statistics/methodology-and-quality/quality/qual-info-economic-social-and-bus-stats/quality-reports-for-business-statistics/index.html
b) http://www.destatis.de/jetspeed/portal/cms/Sites/destatis/Internet/EN/Content/Publikationen/QualityReports/NationalAccounts/NationalAccountsQR,property=file.pdf
c) http://www.dhsspsni.gov.uk/quality_report_for_childrens_statistics-3.pdf
d) http://www.cso.ie/surveysandmethodologies/documents/pdf_docs/stillbirths_registration_quality_report.pdf
e) http://www.dst.dk/HomeUK/Guide/documentation/Varedeklarationer.aspx
f) http://www.csb.gov.lv/en/dokumenti/kvalitates-zinojumi
g) http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/government_finance_statistics/publications/quality_reports

բացատրություն) որակի հաշվետվություններ կարող են նախապատրաստվել և տեղադրվել կայքում

- Ստեղծել որակի հաշվետվության համակարգ, որը հնարավոր է ինտեգրել տվյալների տարածման համակարգի մեջ;
- ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների համար կազմակերպել վերապատրաստում որակի հաշվետվությունների կազմման և որակի ցուցանիշների մասին
- Մշակել վիճակագրական տերմինների[3] տերմինաբանական բառարան
- Հզորացնելու և ժողովրդականացնելու „պաշտոնական վիճակարությունը" դրա բովանդակությունը, մեթոդները և օգտագործումը:

[3]Օրինակ՝ http://metaweb.ine.pt/sim/conceitos/Detalhe.aspx?cnc_cod=3365&cnc_ini=27-05-2002

4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր

ՇԵ նախագծի ղեկավարի և ԱՊ փորձագետների միջև 2011թ. Հունիսի 10-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ ՀՀ ԱՎԾ-ի նախագահ Ստեփան Մնացականյանը համաձայնվեց և հաստատեց ստորև նշված գործողությունները և ժամանակացույցը.

Ա.3 գործունեությունը ըստ նախնական պայմանավորվածության, տեղի կունենա 2011թ սեպտեմբերի 26-30:

Մինչև հաջորդ գործունեությունը ՀՀ ԱՎԾ պետք է իրականացնի հետևյալ գործողությունները՝

1) Նախապատրաստի վիճակագրության պետական խորհրդի հրաման ՀՀ ԱՎԾ-ում որակի հարցերով աշխատանքային խումբ հիմնելու մասին => հրամանը պետք է հաստատվի մինչև 2011 թ. Հունիս ամիսը;
2) Նախապատրաստել որակի հաշվետվության օրինակելի ձև՝ ներառյալ որոշակի որակի ցուցանիշներ (օրինակ՝ չպատասխանողների գործակիցը) => նմուշը պետք է մշակվի, թարգմանվի և ուղարկվի Բաղադրիչ Ա ԱՊ փորձագետներին էլեկտրոնային փոստով համապատասխան դիտողությունների համար մինչև 2011թ հուլիսի վերջը(ԱՊ փորձագետները պետք է տրամադրեն իրենց դիտողությունները ՀՀ ԱՎԾ-ին մինչև 2011թ օգոստոսի վերջը);
3) Նախապատրաստել որակի հաշվետվություններ հինգ տարբեր վիճակագրական արտադրանքների համար (մեկը յուրաքանչյուր ոլորտի համար - արդյունաբերություն, գյուղատնտեսություն, գներ, սոցիալական վիճակագրություն, օր՝ աշխատուժ, մակրոտնտեսություն, օր՝ համախառն ներքին արդյունք) =>մինչև 2011 թ. Օգոստոսի վերջը;
4) Նախապատրաստել ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական արտադրանքի համապարփակ ցուցակ (~200 միավոր) որը կբնութագրի որակի հաշվետվություններում և խմբավորի դրանք ըստ թեմայի (օր՝ գյուղատնտեսություն, ժողովրդագրություն, արդյունաբերություն և այլն) => մինչև 2011 թ. օգոստոսի վերջը
5) Նախապատրաստել Ա.1 և Ա.2 առաքելության զեկույցներում բերված առաջարկների գրավոր արտացոլումը/ընկալումը => մինչև հաջորդ գործունեությունը
6) Տեղեկացնել ՀՀ ԱՎԾ-ի բաժնի պետերին ՈԱԽ առաջադրանքների և առաջընթացի մասին ամենամսյա հանդիպումների ընթացքում

Բոլոր վերը նշված փաստաթղթերը պետք է տրամադրվեն ԹՄԽ-ին էլեկտրոնային ձևաչափով՝ պահպանելով նշված վերջնաժամկետները: Մեկ շաբաթվա ընթացքում ԹՄԽ պետք է ապահովի դրանց անգլերեն թարգմանությունը և էլեկտրոնային եղանակով տրամադրումը բաղադրիչ Ա-ում ներառված ԱՊ փորձագետներին:

Զեկույցի հավելվածներ

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

<u>Նախագիծ</u> Տեխնիկական Առաջադրանք (Ա2)հունիսի 6-10 2011թ.

Բաղադրիչ Ա Որակի Կառավարում
Բաղադրիչ Բ Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ ՀՆԱ –ի Ամբողջականության Բարելավում
Բաղադրիչ Դ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս
Բաղադրիչ Զ Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն

Գործունեություն Ա2 Լուծումների ընտրություն

1. Գործունեության նպատակը
Գործունեությունը կհիմնվի Ա1 առաքելության զեկույցի վրա, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ-ի կողմից ԱՊ փորձագետներին տրամադրվող համապատասխան որակի հռչակագրի և վարչական տվյալներին առնչվող նյութերի վրա: Ի լրումն, գործունեության ընթացքում կքննարկվեն դասակարգման և մեթատվյալների համակարգերը:

2. Ակնկալվող արդյունքը և գործողությունները
Գործողությունների ակնկալվող արդյունքները հետևյալն են `
- Որակի հռչակագրին առնչվող սեմինարի անցկացում
- Դասակարգման տվյալների բազաներին առնչվող սեմինարի անցկացում
- Մեթատվյալների իրականացմանը առնչվող սեմինարի անցկացում
- Հանդիպում Պետական եկամուտների կոմիտեի հետ՝ ՀՀ ԱՎԾ-ի հետ վիճակագրական նպատակներով վարչական տվյալներից օգտավելու համար հետագա համագործակցությունը զարգացնելու նպատակով (բաղադրիչ Բ համագործակցությամբ)
- Ժամանակացույցի կազմում, որում ներառված կլինի ՀՀ ԱՎԾ-ի ներքին աշխատանքային պլանը բաղադրիչի շրջանակում
- Հաջորդ գործունեության նախընտրելի ժամկետի սահմանում

3. Ծրագրի մասնակիցները
Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ Նախագահ (ՇԵ Բաղադրիչի Ղեկավար)
Արտաշես Շաբոյան, Պետական Վիճակագրության Խորհրդի Անդամ
Անահիտ Սաֆյան, Միջազգային Վիճակագրական Համագործակցության Բաժնի Պետ

Լարս Թյուգեսեն, Դանիայի Վիճակագրության Ծառայության Տնօրեն (ԱՊ Բաղադրիչի Ղեկավար)

Յոլանտա Մինկեվիչա, Մեթոդաբանության և կազմակերպչական հարցերի բաժնի պետ, Լատվիայի վիճակագրական ծառայություն

Այլ ՇԵ Փորձագետներ, որոնք մասնակցում են գործունեությանը

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության խորհրդի անդամ
Վանուշ Դավթյան, Տեղեկատվական Տեխնոլոգիաների ոլորտի պատասխանատու, Վիճակագրության խորհրդի անդամ
Լիլիթ Պետրոսյան, Մեթոդաբանության բաժնի պետ
Նարինե Մուշեղյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ
Նատալյա Պողոսյան, ՏՏ վարչության պետ

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը

Պետական Եկամուտների Կոմիտե

4. ԱՊ Փորձագետների հանդիպման ծրագիր : հունիսի 6-ից (երկուշաբթի) – հունիսի10 (ուրբաթ)

Ժամը	**Վայրը**	**Միջոցառում**	**Նպատակ/Միջոցառման մանրամասները**
Երկուշաբթի, առավոտյան	Կոնգրես հյուրա-նոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Երկուշաբթի, կեսօրին	ՀՀԱՎԾ	Հանդպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետնե րի հետ	Ընդհանուր ներածություն և նորություններ: Ա1 բաղադրիչի արդյունքների ամփոփում: ՀՀ ԱՎԾ-ի աշխատանքների կարգավիճակը՝ ○ Որակի հոչակագրերի օրինակելի ձևեր ○ Բոլոր վիճակագրական գործունեությունները ընդգրկող վիճակագրական դոմեյների ցուցակ ○ Ներկայումս օգտագործվող և պոտենցիալ օգտակար վարչական աղբյուրների հաշվառում
Երեքշաբթի առավոտյան,	ՀՀԱՎԾ	Քննարկում-ներ կլոր սեղանի շուրջ	Վարչական ռեգիստրներին առնչվող ՀՀԱՎԾ-ի ռազմավարությունը
Երեքշաբթի կեսօրին,	ՀՀԱՎԾ	Սեմինար (SS մեթոդա-բանություն, տարածում)	Դասակարգման համակարգերի ներկայացում Լատվիայի վիճ. ծառայության կողմից և համապատասխան քննարկումներ
Չորեքշաբթի առավոտյան,	ՀՀԱՎԾ	Սեմինար (SS, մեթոդաբանու թյուն, տարածում)	Որակի հոչակագրեր և մեթատվյալներ և մեթատվյալների համակարգեր-ներկայացում Դանիայի վիճակագրական ծառայության կողմից
Չորեքշաբթի կեսօրին	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Հետագա քննարկումներ ՀՀ ԱՎԾ-ի վարչական ռեգիստրներին առնչվող ռազմավարության վերաբերյալ
Հինգշաբթի, առավոտյան	ՀՀԱՎԾ	Քննարկումնե ր կլոր սեղանի շուրջ	Ինչպես ստեղծել համապարփակ և հաջորդական պլան դասակարգման, մեթատվյալների և որակի հոչակագրերի համար

Հինգշաբթի, կեսօրին	ՀՀԱՎԾ	Հատուկ հանդիպում	Նախագծի հետագա ընթացքի վերաբերյալ հետագա ժամանակացույցի քննարկում
Հինգշաբթի, կեսօրին	Պետական եկամուտ-ների կոմիտե	հանդիպում (բիզնես վիճակագրության հետ համատեղ)	Կցուցադրվի, թե ինչու է ՀՀԱՎԾ և Հարկային մարմնի միջև փոխգործակցությունը երկկողմանի շահավետ
Ուրբաթ, առավոտյան	ՀՀԱՎԾ	Հատուկ հանդիպում	Ժամանակացույցի և ՀՀ ԱՎԾ-ի աշխատանքային պլանի ամփոփում
Ուրբաթ, կեսօրին	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետնե-րի հետ	Արդյունքների, վերլուծությունների համաձայնություններին առաջարկությունների և ՀՀ ԱՎԾ-ի կողմից կատարվելիք աշխատանքի առաջարկների քննարկում և ներկայացում

Հավելված 3. Հանդիպումներ անձանց հետ

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ Նախագահ (ՇԵ Բաղադրիչի Ղեկավար)
Գագիկ Անանյան, Պետական Վիճակագրության Խորհրդի Անդամ
Անահիտ Սաֆյան, Միջազգային Վիճակագրական Համագործակցության Բաժնի Պետ
Վանուշ Դավթյան, ՏՏ պատասխանատու, Պետական Վիճակագրության Խորհրդի Անդամ
Լիլիթ Պետրոսյան, Մեթոդաբանության բաժնի պետ
Նարինե Մուշեղյան, Տվյալների տարածման բաժնի պետ
Լուսյա Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ
Հայկուշ Տիտիզյան, Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների բաժնի պետ
Լուսինե Քալանթարյան, Աշխատանքի բաժնի պետ
Ջուլիետա Միրզոյան, ՀՀ ԱՎԾ-ի նախագահի խորհրդական
Լաերտ Հարությունյան, Բիզնես Ռեգիստրի բաժնի պետ
Աշոտ Անանյան, Արդյունաբերության բաժնի պետ

Արտաքին շահառուներ՝ Պետական Եկամուտների կոմիտե

Հավելված 4. Ազգային վիճակագրական ծառայության արտադրանքի ցուցակի օրինակ (Լ ԿՎԲ)

Էկոնոմիկա և ֆինանսներ

ԲԻԶՆԵՍ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Բիզնես միտումների հետազոտություն - արտադրանք - ամսական

Բիզնես միտումների հետազոտություն - արտադրանք - եռամսյակային

Բիզնես միտումների հետազոտություն - Շինարարություն - ամսական

Բիզնես միտումների հետազոտություն – Մանրածախ առևտուր -ամսական

Բիզնես միտումների հետազոտություն - Ծառայություններ -ամսական

Բիզնես միտումների հետազոտություն –Արդյունաբերական ներդրումներ – վեց ամիսը մեկ անգամ

Բիզնես միտումների հետազոտություն – Շինարարության ներդրուներ – վեց ամիսը մեկ անգամ

Բիզնես միտումների հետազոտություն – Տեղական ինքնակառավարման մարմիններ - տարեկան

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐ

Սպառողական գների ինդեքս - ամսական

Հարմոնիզացված սպառողական գների ինդեքս –ամսական

Հաստատուն հարկի գործակցով հարմոնիզացված սպառողական գների ինդեքս - ամսական

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ֆինանսական առևտրային գործունեության հիմնական ցուցանիշները (առևտրային ընկերություններ) - տարեկան

Ֆինանսական գործունեության առևտրային հիմնական ցուցանիշները (առևտրային ընկերություններ) - եռամսյակային

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման հատվածին պատկանող ընկերությունների ֆինանսական ակտիվներ, պարտավորություններ, շահույթ և վնաս – եռամսյակային

Ֆինանսական ակտիվներ, պարտավորություններ, շահույթ կամ վնաս այլ ֆինանսական միջնորդական և երկրորդական ֆինանսական միջներդական գործունեություն -եռամսյակային

Լիզինգային հավաքածու - եռամսյակային

Կառուցվածքային բիզնես վիճակագրություն - տարեկան

Տնտեսապես ակտիվ ձեռնարկություններ - տարեկան

Տնտեսապես ակտիվ ձեռնարկությունների տեղական ստորաբաժանումները - տարեկան

Տնտեսապես ակտիվ ձեռնարկությունների խումբ - տարեկան

Ձեռնարկությունների ժողովրդագրություն - տարեկան

Ընկերությունների ժողովրդագրություն – գործատուներ - տարեկան

Պետական ֆինանսներ

Պետական տարեկան ֆինանսական հաշիվները - տարեկան

Պետական եռամսյակային ֆինանսական հաշիվներ - եռամսյակային

Ընդհանուր կառավարության պարտք - եռամսյակային

Պետական դեֆիցիտի և պարտքի ծանուցում – տարեկան

Պետական եռամսյակային ոչ ֆինանսական հաշիվներ - եռամսյակային

Ֆինանսական հաստատությունների հատված - եռամսյակային

Ազգային հաշիվներ, Համախառն ներքին արդյունք

ՀՆԱ –ի գնահատում – եռամսյակային

ՀՆԱ եկամուտի եղանակով ընթացիկ գներով - եռամսյակային

ՀՆԱ ծախսերի եղանակով ընթացիկ և հաստատուն գներով - եռամսյակային

Տարեկան հատվածի հաշիվներ - տարեկան

Եռամսյակային հատվածի հաշիվենր - եռամսյակային

Համախառն ազգային եկամուտ -եռամսյակային

Տարածաշրջանային ավելացված արժեք և համախառն ներքին արդյունք - տարեկան

Ներդրումներ

Ոչ ֆինանսական ներդրումներ – տարեկան

Ոչ ֆինանսական ներդրումներ - եռամսյակային

Արտադրողի գներ

Արտադրողի գների ինդեքս արդյունաբերության հատվածում-ամսական

Արտահանման միավորի արժեքի ինդեքսներ- ամսական

Ներմուծման միավորի արժեքի ինդեքսներ – ամսական

Շինարարության արժեքի ինդեքսներ - ամսական

Արրտադրողի գների ինդեքս ծառայությունների մատուցման հատվածի ծառայությունների համար - եռամսյակային

Բնակչություն և սոցիալական գործընթացներ

Մշակույթ

Կրկես – տարեկան

Կենդանաբանական այգի - տարեկան

Գեղարվեստական կինոնկարների վարձակալում - տարեկան

Վիդեո - տարեկան

Ռադիո/հեռուստատեսություն - տարեկան

Մոլուխային հեռուստատեսություն - տարեկան

Կինոարտադրություն - տարեկան

Կրթություն

Ուսումնարաններ - տարեկան

Համալսարաններ և քոլեջներ - տարեկան

Նորարարություններ - տարեկան

Հետազոտություններ - տարեկան

Բարձրագույն ուսումնական հատվածում հետազոտություններ - տարեկան

Զբաղվածություն և գործազրկություն

Աշխատուժի հետազոտություն - եռամսյակային

Աշխատուժի հետազոտություն - տարեկան

Առողջապահություն

Առողջապահության հաշիվներ - տարեկան

Բնակչության առողջության հետազոտություն – առանձին

Տնային տնտեսություններ

Տնային տնտեսության բյուջեի հետազոտություն- տարեկան

Եկամտի և կենսապայմանների (EU-SILC) համայնքային վիճակագրություն - տարեկան

Բնակարանային պայմաններ

Անշարժ գույքի շուկա – եռամսյակային

Շինարարական թույլտվություններ - եռամսյակային

Սեփական վարձակալվող բնակարաններ –եռամսյակային

Բնակարանային ֆոնդ - տարեկան

Աշխատանքի ծախսեր

Աշխատուժի ծախսեր - 4 տարին մեկ անգամ

Վաստակի կառուցվածք - 4 տարին մեկ անգամ

Աշխատակիցների քանակը ըստ աշխատավարձի և վարձատրության –ամսական

Զբաղեցված հաստիքներ - եռամսյակային

Աշխատած ժամեր - եռամսյակային

Աշխատավարձեր և վարձատրություն - եռամսյակային

Աշխատուժի արժեքի ինդեքս - եռամսյակային

Թափուր աշխատատեղեր - եռամսյակային

Ընդհանուր աշխատուժի արժեք և դրանց կառուցվածքը -տարեկան

Աշխատուժի արժեք - եռամսյակային

Ցածր աշխատավարձի հարկի գործակից , աշխատուժի հարկեր – տարեկան
Աշխատակիցների եկամուտ -ամսական

Բնակչություն

Կենսական վիճակագրություն – տարեկան

Երկարաժամկետ - միգրացիա - տարեկան

Բնակչության թվաքանակը - տարեկան

Կյանքի սպասվող տևողությունը - տարեկան

Քաղաքացիություն, ապաստան հայցողներ և փախստականներ - տարեկան

Արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ

Շինարարություն

Շինարարական արտադրանք - եռամսյակային
Շինարարական արտադրանքի ինդեքսներ - եռամսյակային

Արտաքին առևտրի ծառայությունների ստորաբաժանումներ

....FATS վիճակագրություն -տարեկան

Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ինդեքսների ծավալ -ամսական

Շրջանառության ինդեքսներ - ամսական

Նոր պատվերների ինդեքսներ - ամսական

Արդյունաբերական արդյունքի արտադրանք և վաճառք - տարեկան

Կաթնամթերքի արտադրանք - տարեկան

Կաթնամթերքի արտադրանք - ամսական

Առևտուր

Մանրածախ առևտրի շրջանառության ինդեքսներ - ամսական

Ծառայություններ

Տնային տնտեսություններում ՏՀՏ –ի օգտագործում - տարեկան
Մանրածախ առևտրի շրջանառության ինդեքսներ - ամսական
Ծառայության շրջանառության ինդեքսներ - եռամսյակային

Կոմերցիոն ծառայությունների շրջանառություն ըստ արտադրանքի տեսակի - տարեկան

ՏՀՏ և Էլ կոմերցիա -բիզնեսներ - տարեկան

ՏՀՏ հատվածի վիճակագրություն - տարեկան

Ավտոմեքենաների և մոտոցիկլների վաճառքը ըստ արտադրանքի տեսակի - տարեկան

Տրանսպորտ և Զբոսաշրջություն

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության արբանյակային հաշիվներ - տարեկան

Տրանսպորտ

Օդային տրանսպորտ - տարեկան

Երկաթուղային տրանսպորտ - տարեկան

Երկաթուղային տրանսպորտ -ամսական

Օդանավակայաններ – ամսական

Նավահանգիստներ- ամսական

Խողովակաշարերով տրանսպորտ - ամսական

Քաղաքային էլեկտրական տրանսպորտ - եռամսյակային

Ցամաքային տրանսպորտ - եռամսյակային

Ներդրումներ տրանսպորտային ենթակառուցվածքի մեջ - տարեկան

Տուր օպերատորներ - տարեկան

Գյուղացիական զբոսաշրջություն - տարեկան

Հյուրանոցներ և այլ կացարաններ - ամսական

Զվարճանքի և պաշտոնական ուղեվորություններ - եռամսյակային

Զբոսաշրջիկների հետազոտություն (Լատվիայի քաղաքացիներ և արտասահմանյան այցելուներ) - եռամսյակային

Արտաքին առևտուր

Արտաքին առևտուր

Ապրանքների առևտուր ԵՄ Անդամ պետությունների հետ (INTRASTAT) - ամսական

Ապրանքների առևտուր երրորդ պետությունների հետ (EXTRASTAT) - ամսական

Լատվիայի սոցիալական պաշտպանության համակարգի քանակական տվյալների բազա (համաձայն ESSPROS մեթոդաբանության) -տարեկան

ESSPROS (Եվրոպական ինտեգրացված սոցիալական պաշտպանության վիճակագրություն) մոդուլ "կենսաթոշակ ստացողների քանակը " - տարեկան

Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնորսություն

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսական արտադրանքի ինդեքսներ - եռամսյակային

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ, մշակաբույսերի արտադրանք - տարեկան

Անասունների գլխաքանակ և մորթատու կենդանիներ - տարեկան

Տնային կենդանու մորթումը և գնումը - տարեկան

Տնային կենդանու մորթումը և գնումը - ամսական

Անասունների գլխաքանակի արտադրանք - տարեկան

Ծաղկաբուծություն- տարեկան

Գյուղացիական արտադրանքի արտադրություն և վաճառք - եռամսյակային

Հացահատիկի ձեռքբերում - տարեկան

Հացահատիկի ձեռքերում- ամսական

FLAX ձեռքբերում - տարեկան

Պարարտանութերի օգտագործում - տարեկան

Ընդհանուր հողատարածքի և գյուղացիական մշակաբույսերի եկամտաբերության կանխատեսում - ամսական

Գյուղատնտեսական արտադրանքի գները և ինդեքսները - տարեկան

Ձկնորսություն - տարեկան

Ձկնորսություն - եռամսյակային

Շրջակա միջավայր և էներգիա

Շրջակա միջավայր

Գյուղատնտեսական թափոն - տարեկան

Անտառաբուծության արժեք - տարեկան

Փայտանյութի ձեռքբերում - վեց ամիսը մեկ անգամ

Շրջակա միջավայրի հաշիվներ - շրջակա միջավայրի հարկեր - տարեկան

Շրջակա միջավայրի հաշիվներ – NAMEA օդային արտանետումների հաշիվներ - տարեկան

Շրջակա միջավայրի պահպանման ծախսեր - տարեկան

Էներգիա

Գոլորշու և էներգիայի արտադրություն - տարեկան

Էներգիայի ռեսուրսների ձեռքբերում և օգտագործում - տարեկան

Բնական գազի մատակարարում - տարեկան

Էներգիայի արտադրություն և բաշխում - տարեկան

Էներգիայի հավասարակշռում- տարեկան

Էներգիայի ռեսուրսների ներմուծում, արտադրություն և սպառում -ամսական

Հոկտեմբերի 1 –ի դրությամբ էներգիայի ռեսուրսների պաշար - տարեկան